ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 օգոստոսի 2023 թվականի N 1376 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 1154-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի «Անձի քաղաքացիության վերաբերյալ տեղեկություն ստանալու կարգը սահմանելու մասին» N 1154-Ն որոշման նախաբանում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի» բառերով:

2. Որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ ապահովել էլեկտրոնային հյուպատոսական համակարգում նոր բաղադրիչի մշակումը, գործարկումը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող վեցամսյա ժամկետում:

4. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող վեցամսյա ժամկետում ապահովել՝

1) էլեկտրոնային հյուպատոսական համակարգի և Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի փոխգործելիությունը.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցրած անձանց տվյալների պահոցների համակցումը (փոխգործելիությունը) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի հետ.

3) անձի Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին տեղեկանքների էլեկտրոնային եղանակով տրամադրման գործընթացը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ